16677

361
4-93

1898

2010

V 15

ՀԱՇԻ

ԽՆԱՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՅՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ՎԵՑ ԳԻՒՂՕՐԷԻՑ ՆՈՐԻՆ

1898 ԱՄԻ

361
Հ-93

ՌՈՍՏՈՎ (Դոնի վերայ)
ՑՊԻՐԱՆ ՑՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ՍԱՐԱՀԱՄԵԱՆ
1899

370
Հ148-ՀԱ
361
Ա-93

ՀԱՇԻՒ

ԽՆԱՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՅՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ՎԵՑ ԳԻՒՂ[illegible]ՐԷՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԱՍՆ 1898 ԱՄԻ

ՌՈՍՏՈՎ (Դոնի վերայ)
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
1899

2002

40731 ա.

Дозволено Правит. Ростовъ н/Д., тип. И. Теръ-Абраміанъ.

23990.60

2002

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Նոր Նախիջևան քաղաքի և Նորա շրջակայ հայ գիւղերու հոգևորականաց Հոգատար Խնամարկութիւնն այսօր կ'բոլորէ իւր երրորդ տարեշրջանը։ Նորա վարչութիւնը, համաձայն կանոնագրութեան ԺԵ յօդուածի, քաղցր պարտք կ'համարէ իրեն ներկայիս ներկայացնել ընդհանուր ժողովիդ՝ արժանապատիւ հարց և եղբարց, Խնամարկութեան անցեալ 1898 ամի տարեկան ընդհանուր տեղեկագիրը, պարզելով նոյն տարուայ մէջ կատարուած գործողութիւնները և ցոյց տալով Նորա ամբողջ տարուայ մուտք ու ելքը։

Խնամարկութեան Վարչութիւնս անցեալ 1898 տարուայ ընթացքին ունեցել է տասն և մէկ վարչական ժողով և գումարուել է մէկ ընդհան. ժողով անդամոց։

Վարչութիւնս իւր առաջին ժողովի մէջ ընտրելով գործող անդամներ, այն է՝ վարչութեան նախագահ, դանձապահ և գործավար, սկսել է անմիջապէս իւր գործունէութիւնը. ստացել է զանազան խնդիրներ, շարունակ ի կատար ածելով անցեալ ամի կազմուած ընդհանուր ժողովներու որոշումները։

Խնդիրներ ստացուած են չորս հատ.—Գրիգոր Տէր Բաղդասարեանէ, երիցուհի Խաթուն Աֆթանտիլեանէ, այրի Մարիամ Թաշճեանէ և երիցուհի Գայիանէ Տէր Սիմէոնեանէ։ Բոլոր այս խնդիրներու

վերաբերմամբ վարչութիւնս անմիջապէս ժողով կազմել և իւր որոշումներն է արել։ Առաջին խնդրատուն յայտնելով վարչութեանս իւր կնոջ հիւանդութեան մասին, կ'խնդրէր միանուագ օգնութիւն, զոնէ հիւանդանոցի երկու ամսուան վարձը վճարելու չափ դրամ։ Վարչութիւնս քննութեան առնելով խնդիրը և տեսնելով, որ այդ խնդրատու անձը, թէև քահանայի որդի, բայց այժմ հեռացած հոգևոր կոչմանէ, ուստի՝ իբրև աշխարհականի, ի ցաւ սրտի, ստիպուեցաւ մերժել նորա խնդիրը։ Իսկ միւս խնդիրներու մասին վարչութիւնս հետեւեալ պատճառներով բացասական պատասխան է տուել. այն է՝—Աֆթանտիլեանին առ այժմ խնամարկութեանս օգնութեան անկարօտ է համարել.—Թաշճեան այրոյն իբրև երիտասարդ և գործելու ընդունակ անձի և միանգամայն անզաւակի.—Իսկ Տէր-Սիմէօնեանին՝ իբրև նպաստ ստացողի որբոց և այրեաց Հոգաբարձութենէ, թէև շատ մանաւոր։ Այս խնդիրներու, մանաւանդ Աֆթանտիլեանի և Տէր-Սիմէօնեան երիցուհիներու համար Վարչութիւնս ընդհանուր ժողովիդ ուշադրութիւնը և տնօրէնութիւնը կ'խնդրէ։

Խնամարկութեանս հաստատեալ կանոնադրութեան թերի կողմներն աւելի պարզաբանելու և մշակելու համար ընդհանուր ժողովով որոշուած էր անոր հայերէն և ռուսերէն օրինակներն ուղարկել պարտաւորական անդամներուն՝ իրենց նկատողութիւններն անելու, բայց որովհետև մինչև այժմ ոչ մի անդամէ բացատրութիւն կամ նկատողութիւն

չէ ստացուած, անոր համար և Վարչութիւնս ալ չէ կարող այժմ ընդհանուր ժողովիդ այդ մասին տալ որ և իցէ բացատրութիւն։

Վարչութեանս դրամական գործունէութիւնն առ հասարակ իւր ընթացիկ հաշիւներովը ամսէ ամիս կանոնաւոր եղանակաւ զննուած է վերատեսուչ յանձնաժողովի կողմանէ։

Վարչութիւնս այստեղ պարտք կ'համարէ յիշեցնել ընդհանուր ժողովիդ՝ այրի Եղիսաբէթ Կարապետեանի ամսական թոշակի տուչութեան մասին, որ անցեալ տարուայ ընդհանուր ժողովով որոշուած էր մի տարի ժամանակով, այն է՝ մինչև այս ընդհանուր ժողովի օրը միայն տալ. ուստի, այսօր ընդհանուր ժողովդ արդեօք արժան չի դատիլ կըրկին իւր խորհրդածութեան նիւթ դարձնել և որոշել տուչութիւնը շարունակել թէ ոչ. թէպէտ, յիշեալ Կարապետեան այրոյն կողմանէ ոչ մի խնդիր չէ տրուած, բայց Վարչութիւնս տեղեկացած է, որ նորա ընտանեկան դրութեան մէջ դէպի մխիթարականը՝ որ և իցէ փոփոխութիւն չէ եղած։

Վարչութիւնս ի ցաւ սրտի կ'յայտնէ ընդհանուր ժողովիդ, որ ապառիկներ կան անցեալ տարուանէ մնացած մի քանի պարտաւորական անդամներու և մի եկեղեցւոյ վերայ, ընդ ամենը վաթսուն և հինգ ռուբլի (65 ռ.)։

Վարչութիւնս տարուանս մէջ փոխարինաբար տուել է իւր անդամներուն չորս հարիւր երեսուն ռուբլի (430 ռ.), որոցմէ մնացած է չ'ստացուած մինչև օրս մի հարիւր ութսուն ռուբլի (180 ռ.)։

Վարչութեանս անդամներուն պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացած լինելով՝ կ՚խնդրէ Սա ընդհանուր ժողովէդ, որ տարեկան հաշուատեսութենէն ետքը ձեռնարկէ դա նոր անդամներու ընտրութեան։

Վարչութիւնս իւր շնորհակալութիւնը կ՚յայտնէ այն նուիրատու անձինքներուն, որոնք բարեկրօն Տէր Սարգիս քահանայ Ոսկերչեանի և շնորհունակ Ստեփաննոս դպիր Պարտախճեանի միջոցաւ նպաստած են խնամարկութեանս։

Խնամարկութեանս դրամական հաշիւները, մուտքն ու ելքը այս հետեւեալն է.

Ինչպէս Վարչութեանս հաշուեմատեաններէն կ՚երևի, առ 1-ն Յունուարի 1898 ամի խնամարկութեանս ունեցած դրամագլուխն էր 2195 ր. 78 կ.

1898 տարուայ մէջ մուտք ունեցածէ	910 ր. 97 կ.
Նոյն տարուայ մէջ ծախք եղած	443 ր. 06 կ.

Որ ծախուց այս 443 ր. 06 կ. գումարը հանելով մտից 910 ր. 97 կ. գումարէն՝ կմնայ յաւելեալ գումար 467 ր. 91 կ.

Եւ այս գումարը բարդելով անցեալ ամէ յաւելեալ 2195 ր. 78 կ. վերայ՝ կ՚լինի ընդհանուր գումարն առ 1-ն Յունուարի 1899 ամի, երկու հազար վեց հարիւր վաթսուն երեք ռուբ. վաթսուն ինն կոպ. 2663 ր. 69 կ.

Այս գումարը կ՚կազմեն.

ա. Հիմնական դրամագլուխ տեղւոյս քաղաքային դրամանոցը $4^1/_2$%	2000 ր. —

բ. Նոյն դրամանոցին մէջ ընթացական հաշուով . . .	308 ր. 78 կ.
գ. Առձեռն պատրաստի գումար դանձապահի մօտ . . .	174 ր. 91 կ.
դ. Փոխարինաբար տրուած գումար	180 ր. —
Ընդամէնը	2663 ր. 69 կ.

Ծանօթ. Ապառիկներ 1897 ամէ պարտաւորական երկու անդամներու վերայ 20 ր.
Նոյնպէս 1898 ամէ՝ երեք անդամներու 30 ր.
Մի եկեղեցւոյ վերայ 1898 ամէ . 15 ր.
Գումարն 65 ր.

ՊԱՏԿԵՐ ՄՏԻՑ

Առ 1-ն Յունուարի 1898 ամի կ՚գտնուէր զուտ դրամագլուխ . 2195 ր. 78 կ.

1898 ՏԱՐՈՒՈՑ ՄԷՋ ՄՈՒՏՔ ԵՂԵԼ Է

ա. Քաղաքի և գիւղերու եկեղեցիներէն	285 ր. —
բ. Պարտաւորական անդամավճարներ	381 ր. —
գ. Նախանձաւոր անդամներէ .	45 ր. —
դ. Կամաւոր նուէրներ Տ. Սարգիս քահանայ Ոսկերչեանի միջոցաւ . .	10 ր. —
Դպ. Ստեփաննոս Պարտախճեանի միջոցաւ	5 ր. —
ե. Ըստ կտակի հանգուցեալ Մկրտիչ Մուրատխանեանի 1896, 1897, 1898 տարիներու համար .	75 ր. —

զ. Հիմնական դումարի % . .	87 ր. 88 կ.
է. Ընթացիկ հաշիւների % . .	7 ր. 24 կ.
ը. Փոխարինաբար դրամ ստացողներէ իրեն նպաստ . . .	14 ր. 85 կ.
Ընդամէնը	910 ր. 97 կ.

ՊԱՏԿԵՐ ԵԼԻՑ

ա. Տէր Նիկողայոս քահանայ Բօսնակեանին . . .	300 ր. —
բ. Այրի Եղիսաբէթ Կարապետեանին 11 ամսոց . . .	110 ր. —
գ. Վարչութեան ծախքը, այն է՝ տպագրութեան հաշուետետրակներու և անդորրագրերու . .	33 ր. 06 կ.
Ընդամէնը	443 ր. 06 կ.

ԿԱՆԽԱՀԱՇԻՒ ՎԱՍՆ 1899 ԱՄԻ.

ՄՈՒՏՔ

ա. Քաղաքի և գիւղերու եկեղեցիներէն	300 ր. —
բ. Անդամավճարներ . . .	421 ր. —
գ. Մուրատխանեանէ . . .	25 ր. —
դ. Նախանձաւոր անդամներէ . .	35 ր. —
ե. Հիմնական դրամագլխի % . . Ընթացիկ դումարի % . .	120 ր. —
Ընդամէնը	901 ր. —

ԵԼՔ

ա. Նիկողայոս ք. Բօսնակեանցին տարեկան նպաստ . . .	300 ր. —
բ. Այրի Եղիսաբէթ Կարապետեանին տարեկան նպաստ . . .	120 ր. —
գ. Տարեկան տեղեկագրի տպագրութեան	50 ր. —
դ. Դիւանական և տնտեսական ծախքերու	50 ր. —
ե. Վարչութեան տրամադրութեան յանձնուած անակընկալ դէպքերու հար.	100 ր. —
Ընդամէնը	620 ր. —

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ, ՈՐ Ի 23 ՓԵՏՐՎԱՐԻ 1899 ԱՄԻ

Հոգևորականաց խնամարկութեան Վարչութեան հրաւէրով փետրուար ամսոյ 23-ին 1899 ամի՝ տեղի ունեցաւ խնամարկութեանս տարեկան ընդհանուր ժողովը, նոյն ժողովում ընտրուած Տէր Մինաս քահանայ Խումաշեանի նախագահութեամբ։

Նախ՝ կարդացուեցաւ Վարչութեան առաջարկած տեղեկագիրը նորա գործունէութեան մասին յընթացս 1898 ամի, որից յետոյ ստուգուեցան հաշուեմատեանները, ելից և մտից հաշիւը և գտաւ, որ ճիշտ և կանոնաւոր վարած է, ուստի ընդհանուր ժողովը յայտնեց Վարչութեան իւր շնորհակալութիւնը նորա անձանձիր աշխատանաց համար։

Յայտնուեցաւ ընդհանուր ժողովին, որ յօգուտ խնամարկութեանս ստացուած է պ. Գարսեան Արազեանէն ի յիշատակ հանգուցեալ Տէր Գէորգ ա. ք. Պալապանեանցի երեք հարիւր ռուբլի (300 ռ.) մըշտընջենաւոր անդամութեան համար։ Ժողովս ուրախութեամբ և շնորհակալութեամբ ընդունելով սոյն երեք հարիւր ռուբլին ի յարգանս յիշատակի հանգուցեալ Տէր Գէորգ ա. քահանայի՝ պատուեց նորա յիշատակը ոտքի կանգնելով և «հոգւոց» ասելով։ Ժողովականները լիաբերան շնորհակալութիւն յայտնեցին նաև Տէր Խաչատուր ա. քահանայ Զարիֆեանին, որի յորդորանքով կատարուել էր յիշեալ բարի գործը։

Որովհետև համաձայն կանոնադրութեան, տարեկան ամբողջ եկամուտի մի քառորդ մասը—այն է՝ երկու հարիւր քսան եօթն ռուբլի եօթանասուն և չորս կոպէկը (227 ռ. 74 կ.) պէտք է աւելացուի մայր գումարի վերայ, ուստի ժողովս որոշեց՝ աւելացնել այս գումարի վերայ եօթանասուն երկու ռուբլի քսան և վեց կոպ. (72 ռ. 26 կ.), առնելով այդ գումարը մնացորդ երկու հարիւր տասն և հինգ ռուբլի երեսուն երկու կոպէկի վրայէն և կազմուած երեք հարիւր ռուբլին (300 ռ.) բարդել հիմնական դրամագլխի վերայ։ Իսկ միւս մի հարիւր քառասուն երեք ռուբլի և վեց կոպէկը (143 ռ. 06 կ.) աւելացնել 1899 ամի կանխահաշուի՝ մուտքի՝ գումարի վերայ և գործածել խնամարկութեանս պէտքին։ Ընդհանուր ժողովը տեսնելով, որ կան խնդրատուներ, որոնք խնդրած են նպաստ, բայց դանձարանը աւելորդ փող չլինելու պատճառով՝ Վարչութիւնն անկարող է եղել բաւականութիւն տալու, վասն որոյ այս հանդամանքը աչքի առաջ ունենալով՝ որոշեց, մայր գումարի վերայ աւելացնելիք փոխանակ 227 ռ. 74 կ.՝ ձգել դրամանոց ի չահեցողութիւն երեք հարիւր ռուբլի (300 ռ.), իսկ մնացած մի հարիւր քառասուն երեք ռուբլի և վեց կոպէկը (143 ռ. 06 կ.) աւելացնել այս տարուայ կանխահաշուի վերայ եւ գործադրել ի պէտս հարկաւորութեան։

Ընդհանուր ժողովս խորհրդածութիւն ունենալով նաեւ երկու խնդրատու երիցուհիների—Տէր Սիմէօնեանի եւ Ագթանտիլեանի խնդիրներու մասին՝ տեսաւ եւ արժանի համարեց նոցա օգնութեան, ուստի եւ որոշեց տալ նոցա ամսական հինգ-հինգ ռուբլի՝ սկսելով այս տարուայ Յունուար ամսէն։

Վարչութիւնը՝ Ընդհանուր ժողովիս յիշեցուցած էր այրի տիկին Եղիսաբէթ Կարապետեանի ամսական տասը ռուբլի տալու մասին, որ որոշուած էր տալ մէկ տարի ժամանակով, այժմ կրկին խորհրդածութեան առնելով թէ՝ այդ այրի կնոջ ընտանեկան դրութիւնը ոչինչով թեթեւացած չէ անցեալ տարուանէ, որոշեց ամսական տասը ռուբլի տուչութիւնը շարունակել մի տարի ժամանակով եւս։

Ընդհանուր ժողովը լսեց աշխարհական սպասաւորների խնդիրը, որով կ՚խնդրեն նոքա մասնակցել ընդհանուր ժողովներու եւ պարտաւորական անդամներու հետ հաւասար ձայն ունենալ, այն է՝ իրաւունք ունենալ ընտրելու եւ ընտրուելու։

ժողովս աչքի առաջ ունենալով կանոնադրութեան այն կէտը թէ՝ նախանձաւոր անդամները չունին ընտրողական ձայն, ուստի որոշեց նոցա խնդիրը կցել գործին եւ կանոնադրութեան մշակման դէպքում ի նկատի ունենալ նաեւ այս խնդիրը։

Ընդհանուր ժողովս համաձայն է վարչութեան առաջարկած կանխահաշուի հետ 1899 տարուայ համար, որոյ մտից գումարն է լինն հարիւր մէկ ռուբլի, իսկ ելիցը վեց հարիւր քսան ռուբլի։

Ապա՝ ընդհանուր ժողովս ձեռնարկեց վարչութեան նոր անդամների քուէարկութեան եւ ընտրութեան, նոյնպէս եւ վերաստուգող յանձնաժողովի անդամների։ Վարչութեան անդամներ ընտրուեցան Տ. Սարգիս քահանայ Ոսկերչեան, Տ. Մըկըրտիչ քահանայ Գանձապետեան, Տ. Մինաս քահանայ Խումաշեան, Տ. Պօղոս քահանայ Բեղելեան եւ Տ. Մկրտիչ քահանայ Տէր-Յակովբեան։ Իսկ վերաստուգող յանձնաժողովի անդամներ՝ Տ. Մարտիրոս քահանայ Իւղբաշեան*) եւ Տ. Գէորգ քահանայ Քելլէ-Շահինեան։

Ընդ իսկականին համեմատ է.

Գործավար անդամ Մինաս քահանայ Խումաշեան.

---

*) Տէր Մարտիրոս քահանայ Իւղբաշեանի հրաժարուելովն, Մայիսի 18-ին կազմուած արտակարգ ընդհանուր ժողովն ընտրեց վերաստուգող անդամ արժ. Յովակիմ ա. քահանայ Ստեփաննոսեանին.

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Տ. Սարգիս քահանայ Ոսկերչեան (Նախագահ)
2. Տ. Մկրտիչ քահանայ Տէր Յակոբեան (Դանձապահ)
3. Տ. Մինաս քահանայ Խումաշեան (Գործավար)
4. Տ. Մկրտիչ քահանայ Գանձապետեան.
5. Տ. Պօղոս քահանայ Բեղելեան.

ՎԵՐԱՍՏՈՒԳՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Տ. Յովակիմ ա. քահանայ Ստեփաննոսեան.
2. Տ. Գէորգ քահանայ Քելլէ Շահինեան.

ՅՈՒՅԱԿ ԱՆԴԱՄՈՅ

Ի ՔԱՂԱՔԻՍ

1. Խաչատուր ա. ք. Զարիֆեան.
2. Յովակիմ ա. ք. Ստեփաննոսեան.
3. Յովհաննէս ք. Սադունեան.
4. Յակոբ ք. Շատուրեան.
5. Սարգիս ք. Մաքսըմանեան.
6. Սարգիս ք. Ոսկերչեան.
7. Յակոբ ք. Նախաչեան.
8. Մինաս ք. Փախալեան.
9. Մարտիրոս ք. Գանձապետեան.
10. Պետրոս ք. Զօլախեան.
11. Գէորգ ք. Մուշեղեան.
12. Մկրտիչ ք. Գանձապետեան.
13. Մարտիրոս ք. Իւղբաշեան.
14. Նիկողայոս ք. Բօանակեան.
15. Քրիստափոր ք. Թանգեան.
16. Մինաս ք. Խումաշեան.
17. Սահակ ք. Զարիֆեան.
18. Գէորգ ք. Քելլէ-Շահինեան.

19. Պօղոս ք. Բեդելեան.
20. Մկրտիչ ք. Տէր-Յակովբեան.
21. Սիմէօն սարկաւագ Մարմարեան.
22. Գաբրիէլ կիսասարկաւագ Պատկանեան.
23. Առաքել ,, Նուբբէգեան.
24. Նիկողայոս դ. Տէր-Սարգսեան.
25. Մարգար դ. Տէր-Սարգսեան.
26. Յովակիմ դ. Մխիթարեան.
27. Ստեփաննոս դ. Պարտախճեան.
28. Գաբրիէլ դ. Զախմախեան.
29. Պետրոս դ. Զափխընեան.
30. Գասպար դ. Խայիմեան.
31. Գէորգ դ. Թերզեան.

Ի ԳԻՒՂՕՐԱՅՍ

Ի ՉԱԼԹՐ

32. Յովհաննէս ք. Քրիստոստուրեան.
33. Խաչատուր ք. Բաղդասարեան.
34. Գրիգոր ք. Բարտախճեան.
35. Նորընծայ Աբգար ք. Բառաչեան.
36. Սպասաւոր Թէոդորոս Բարտախճեան.
37. ,, Սիմէօն Քրիստոստուրեան.

Ի ԹՈՓՏԻ

38. Գաբրիէլ ք. Տէր-Աբրահամեան.
39. Միքայէլ ք. Տէր-Միքայէլեան.
40. Բարսեղ ք. Նահապետեան.
41. Էմմանուէլ ք. Հաճիեան.

Ի ՄԵԾ-ՍԱԼԱ

42. Ալէքսիանոս ք. Զօրայեան.
43. Յովակիմ ք. Շուլուեան.
44. Արսէն ք. Տոմբայեան.

Ի ՓՈՔՐ ՍԱԼԱ

45. Գէորգ ք. Խուճեան.
46. Դպիր Գաբրիէլ Թոփալեան.

Ի ՆԻՍՎԻԹԱՑ

47. Սարգիս ք. Մարտիրոսեան.

Ի ԿԱՏԵՐԻՆԷ ԳԻՒՂ

48. Անանիա ք. Փիրալեան.

ՆԱԽԱՆՁԱՒՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ալաճալեան Իսահակ Մանուկեան.
2. Բադիկեան Ծերուն.
3. Խոճայեան Կարապետ Գէորգեան.
4. Խազիզեան Աւետիք Աստուածատրեան.
5. Խազիզեան Գրիգոր Աստուածատրեան.
6. Խումաճեան Միքայէլ Աստուածատրեան.
7. Հեքիմեան Յակովբ Յովհաննիսեան.
8. Մարգարեան Ղազարոս.
9. Մուշեան Նիկողայոս Եղիայեան
10. Պողով Թադէոս Պետրոսեան.
11. Տէր-Գրիգորեան Գրիգոր Մարկոսեան.

ԱՆՈՒԱՆՔ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱՑ ԵՒ ԲԱՐԵՐԱՐԱՑ

1. Գէորգ ա. ք. Պալապանեան (հանգ.)
2. Մինաս Ալէքսանեան Խալիբեան (հանգ.)
3. Մկրտիչ Թորոսեան Մուրատխանեան (հանգ.)

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Պօղոս ա. ք. Ստեփաննոսեան.

2. Յովհաննէս ք. Աֆթանտիլեան.
3. Մովսէս ք. Զարիֆեան.
4. Դպիր Նիկողայոս Կարապետեան.
5. ,, Կարապետ Թաշճեան.
6. ,, Արիստակէս Պարտախճեան.

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013